Ժամանակագրությունը Դավրիժեցու պատմագրքի առանցքն է: «Այլ և գիտելի է, զի ըստ պահանջելոյ հարկին աստանօր պարտ է դնել զթուականն իբր զհիմն, և ապա յարել ի նոյն զպատմութիւն որպէս զշինուածս, ըստ օրինի պատմագրաց: ...մեք յոլով աշխատութեամբ խոյզ արարեալ՝ զորս գտաք, կարգեցաք ընդ պատմութեանն և զթուականն ևս, և զորս ոչ գտաք, առանց թուականի պատմեցաք» (էջ 55),– ընդգծում է պատմիչն իր պատմագրքի «Նախադրություն...»-ում:

Ժամանակագրության գերակայությամբ պատմության վկայագրության առումով Դավրիժեցին հետևում է ոչ միայն Քերթողահոր պատվերին, այլև պատմագրության ժանրային տվյալ փուլի հանգրվանային կացության օրինաչափությունն է արձանագրում: Այլ հարց է, որ Դավրիժեցին ժամանակագրությունն ընկալում է երբեմն սոսկ թվագրումների արձանագրման մակարդակով: Այս առումով նրա պատմագրքում առկա պարսիկ թագավորների ու հայոց կաթողիկոսների գահակալության ցանկերը, մեր կարծիքով, ոչ այնքան չիրագործված հղացքի՝ մանրամասն հյուսվածքի նշագրումներ են, ինչպես գրեթե միշտ մեկնաբանվել է, այլ պարզապես նյութի մատուցման գիտակցված կերպ: Կարծում ենք՝ այս առումով փոքր-ինչ չափազանցված է այն տեսակետը, թե «Առաքել Դավրիժեցու երկի ուսումնասիրությունից հանգում ենք այն համոզման, որ այն բովանդակում է ոչ միայն XVII դարի առաջին կեսի պատմական իրադարձությունների ժամանակագրությունը, այլև կես դարից ավելի ընդգրկող պատմական ժամանակաշրջանը ներկայացված է խորը վերլուծությամբ, իմաստուն մեկնաբանություններով, ներկայի համար՝ արժեքավոր հետևություններով»[8]: Չափազանցված՝ ***ժամանակագրության*** գործոնի ընդգրկման

---

[8] ***Լ. Գ. Սահակյան,*** Աշխարհագրական դետերմինիզմի տարրերը Առաքել Դավրիժեցու Պատմության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2005, թիվ 3, էջ 150: